

Ֆրանկ Ռ. Անկերսմիթ (Գրոնինգեն)

ՎԵՑ ԴՐՈՒՅԹ ՆԱՐԱՏԻՎԻՍՏԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Առաջաբան*

«Քանի որ գիտությունը չի սահմանափակում իրեն
օգտակար կանոնավորություն մտցնելով, այլ որոնում
է ճշմարտությունը, այն պարտավոր է լեգիտիմացնել
իր խաղի կանոնները»¹:

Ժ. Ֆ. Լիոտար

**Լուսավորականությունից սկսած՝ պատմագիտության առջև դրվեց
«հսկիչ» հարց. ինչպե՞ս է հնարավոր պատմագիտական գիտելիքը:**

Հարցին զուգահեռ, ըստ էության, առաջադրվեց պատմության վերա-
կառուցելիության պատգամը, այն է՝ պատմագիտական գիտելիքը հնարա-
վոր է, եթե հնարավոր է պատմության վերակառուցումը: Առաջին հայացքից
անմեղ թվացող այս պահանջի իրականացումը բավականին լուրջ դժվա-
րությունների հետ է կապված: Մի կողմից, անցյալը մեզ ներկայանում է
որոշակի տեքստերի միջոցով, որոնք ամեն անգամ, փաստորեն, գոյություն
ունեն այստեղ և հիմա, մյուս կողմից՝ պատմագիտության տեսանկյունից
այդ տեքստերի ճշգրտության (գիտականության) պարզաբանումն առնվազն
խնդրահարույց է: Ռոլան Բարտը, անդրադառնալով պատմողական տեքս-
տերին, հարցը դնում էր այսպես. ինչո՞վ են տարբերվում իրարից վեպը և
նովելը, հեքիաթը և առասպելը, պատմությունը և գրականությունը և այլն²:
Տրամաբանորեն, այս հարցադրումից սկսած՝ խնդիր է դրվում գտնել պատ-
մողականության կառուցվածքը:

Անցյալ դարի 60–70–ական թթ. նշված հարցերին հնարավորինս համա-
պարփակ անդրադառնալու համար անգլո–ամերիկյան աշխարհի պատմու–

ՎԿՄ համահայկական հանդես
Է (ԺԳ) փարի, թիվ 3 (51) հուլիս–սեպտեմբեր, 2015

* **Դավիթ Ռ. Մոսինյանի** այս ոչ մեծ առաջաբանը նպատակ ունի հայ ընթերցողին մատչելի դարձնել
մեր ժամանակների ակնավոր պատմագետ **Ֆրանկ Ռ. Անկերսմիթի** դրույթները: Խմբ.: Ընդունվել
է տպագրության 20.08.2015:

1 **Lyotard J.-F.**, The Postmodern Condition. Translation from the French by Geoff Bennington and Brian
Massumi. University of Minnesota Press, 1984, p. xxiii.

2 Տե՛ս **Բարտ Ք.**, Нулевая степень письма. М., 2008, էջ 354:

թյան փիլիսոփայության ոլորտում լեզվաբանական շրջադարձ է տեղի ունենում: Այդ համատեքստում ձևավորված ամենաազդեցիկ ուղղությունը դառնում է նարատիվիզմը, որի ականավոր ներկայացուցիչներն են Արթուր Դանթոն (ծնվ. 1924 թ.), Հայդեն Ուայթը (ծնվ. 1928 թ.) և Ֆրանկ Անկերամիթը (ծնվ. 1945 թ.): Ըստ նարատիվիստների՝ պատմությունը կառուցվում է որպես յուրօրինակ պատում (նարատիվ): Այլ կերպ՝ ամեն անգամ պատմությանը «մոտենալիս» մենք հանդիպում ենք որոշակի պատմվածի (ասվածի), որը յուրաքանչյուր կոնկրետ դեպքում **ինչ-որ մեկի** պատմածն է և պատմված է որոշակի ժամանակաշրջանում, ինչը նշանակում է, որ «պատմական ճշմարտություն» կոչվածը ժամանակից ածանցյալ և խիստ պայմանական երևույթ է: Անդրադառնալով նարատիվ նախադասություններին՝ Ա. Դանթոն հետևյալ օրինակն է բերում. «**Հիմունքների** հեղինակը ծնվել է 1642 թ. Վուլսթորփում»³: Սա կարելի է փոխարինել նույն նշանակությունն ունեցող մեկ այլ նախադասությամբ. «Իսահակ Նյուտոնը ծնվել է 1642 թ. Վուլսթորփում»: Բայց սրանց միջև էական տարբերություն կա. առաջինը ճշմարիտ կարող է լինել միայն 1687 թ. հետո, այսինքն՝ Ի. Նյուտոնի աշխատության հրատարակումից հետո: Եթե անգամ ներմուծենք **կատարյալ ժամանակագրության** գաղափարը, որտեղ կամրագրվեն բոլոր իրադարձությունները, դրանով պատմաբանի խնդիրը չի վերանա: Քանի որ, նախ, անցյալի իրադարձությունները գոյավորվում են ներկայի հետ հարաբերության մեջ և երկրորդ, կատարյալ ժամանակագրության մեջ չկան պատճառներ և հետևանքներ:

Երբ պատմաբանը փորձում է փաստերը ներկայացնել ինչ-որ կառուցվածքի մեջ, կամա թե ականա, կիրառում է պոետիկ լեզվի չորս տրոպներից⁴ մեկը՝ փոխաբերություն, փոխանունություն (metonymy), սինեկդոխա և հեգնանք⁵: Իր հիմնական աշխատությունը վերնագրելով «Մետապատմություն»՝ Հայդեն Ուայթը բացահայտում է տարբեր պատմաբանների աշխատությունների (տեքստերի) հիմքում առկա լեզվական հնարքների ամբողջությունը:

Այսօրինակ համատեքստում է հոլանդացի պատմաբան և փիլիսոփա Ֆ.Անկերամիթը զարգացնում իր մեկնաբանական, պոստմոդեռնիստական, նարատիվիստական պատմության փիլիսոփայությունը՝ այն հակադրելով նկարագրական, մոդեռնիստական և իմացաբանական պատմության փիլիսոփայությանը⁶: Պատմության նարատիվիստական ըմբռնումը ելնում է այն դրույթից, որ **պատմագիտական հետազոտությունը և պատմագիտական գիրը** հստակորեն սահմանազատված են միմյանցից:

Ընդամին, նարատիվիստական դիրքորոշումը չի ելնում գրի սահմաններից: **Նարատիվիզմի շրջանակներում պատմագիտության առարկան դառնում է ոչ թե անցյալն ինքնին, այլ անցյալի մասին մտածումը, որը**

3 Տե՛ս **Данто А.**, Аналитическая философия истории. М., Идея-Пресс, 2002, էջ 153:

4 Հունարեն *τρόπος* բառից է. նշանակում է լեզվական ֆիգուր, որը գործածվում է խոսքն առավել պատկերավոր դարձնելու համար: Տրոպներն ուսումնասիրող ուսմունքը կոչվում է տրոպաբանություն:

5 Տե՛ս **White H.**, Metahistory. The Historical Imagination in Nineteenth-Century Europe. The Johns Hopkins University Press, 1973, էջ x:

6 Տե՛ս **Ankersmit F.**, History and Tropology. The Rise and Fall of Metaphor. Berkeley: University of California Press, 1994, էջ 44:

միշտ ներկայանում է լեզվի միջոցով: Միջնորդավորվելով Հ. Ուայթի՝ պատմագիտական տեքստերին տրոպաբանությամբ մոտենալու գաղափարից՝ Ֆ. Անկերսմիթը նկատում է նարատիվի՝ ուղեցույց լինելու միտումը: **Նարատիվը ոչ թե իրենով նշանակում է անցյալը, այլ յուրօրինակ լեզու է առաջադրում անցյալը մտածելու համար:** Քննելով կատարյալ նարատիվի դիտանկյունները՝ Ֆ. Անկերսմիթը ուղղակիորեն գրում է. «Նարատիվի գործառույթը աշխարհում մեր կողմնորոշվելը հեշտացնելն է»⁷: Սա նշանակում է, որ **անցյալը գոյություն չունի որպես մեկ ամբողջություն և անընդհատ կարող է փոփոխվել՝ կախված մեր լեզվական պրակտիկայի զարգացումից:** Անցյալի ստվերն ի հայտ է գալիս, երբ որևէ նոր պատմագիտական նարատիվ է շրջանառության մեջ մտնում: Փաստորեն, այնպես, ինչպես փոխաբերության իմացական արժեքը մեծապես այլ մտածական իրողությունների հետ սուբյեկտին կամրջելն է, որոնք մինչև վերջ լեզվականորեն արտահայտելի չեն, այդպես էլ նարատիվն է «հուշում» **հնարավոր** պատմական ռեալության մասին, որը կարող է լինել տրված լեզվական միջոցների և համատեքստի առկայության պայմաններում: Եվ քանի որ յուրաքանչյուր պատմական նարատիվ հնարավորության աշխարհից է և ոչ թե անհրաժեշտության, ուրեմն դրա կրողը ամեն անգամ որոշակի անհատն է, և անիմաստ է խոսել տրանսցենդենտալ սուբյեկտի կամ իդեալական ժամանակագրի մասին, որն ամեն ինչ գիտի անցյալի մասին: Այլ կերպ՝ **ինքնին պատմությունը** դատարկ հասկացություն է: Պատմությունը **ներկայանում է** որպես տարբեր նարատիվ մեկնաբանությունների բախում: Եթե չկա մեկից ավելի մեկնաբանություն, չկա մեկնաբանություն առիասարակ և ուրեմն՝ նաև պատմություն: Այս դիտանկյունից, ի տարբերություն ավանդական պատկերացման, պատմաբանի խնդիրը դառնում է «անցյալը» սուբյեկտից վանելը՝ ամրագրելով անցյալի և ներկայի սահմանը:

Պատմագիտական նարատիվը մեկնաբանություն է: Բայց այս դատողությունն ավելի շուտ մեթոդաբանական կարգավիճակ ունի, քան իմացաբանական: Մեկնաբանությունն իմացաբանորեն հակադրվում է նկարագրությանը: Մեկնաբանության վկայակոչումը ենթադրում է որոշակի սահմանագծում, որից այն կողմ կարելի է ցուցադրել նկարագրությունը: Սակայն նարատիվի պարագայում դրանք միահյուսված են: «Նարատիվներն ավելին են, քան պարզապես նախադասությունների կոնյունկցիաները»⁸, ինչը նշանակում է, որ լեզվի փիլիսոփայության ոլորտում նախադասության մասին ձեռք բերված գիտելիքների արտարկումը պատմության ոլորտ մեծ հաջողություններ չի խոստանում: Ֆ.Անկերսմիթը հակված է նարատիվը նմանեցնելու կտավին՝ նշելով, որ եթե նայենք, օրինակ, Գոյայի պատկերած դուքս Վելինգտոնին, ապա ուղղակի չենք կարող սահմանազատել դուքսին այն հավելյալ բնութագրերից, որոնք Գոյան ցանկացել է փոխանցել կտավին⁹: Ի դեպ, իմացաբանորեն նույն կարգավիճակն ունեն պատմական

7 Ankersmit F., Narrative Logic. A Semantic Analysis of the Historian's Language. Martinus Nijhoff Publishers, 1983, էջ 33:
 8 Նույն տեղում. էջ 58:
 9 Տե՛ս Ankersmit F., History and Tropology. The Rise and Fall of Metaphor. University of California Press, 1994, էջ 4-5:

Ժամանակաշրջան նշանակող անունները, ինչպիսիք են, օրինակ, «միջնադարը», «վերածնունդը», «ֆրանսիական հեղափոխությունը», «սառը պատերազմը» և այլն: Պատմական գիտակցությունը «չափից ավելի լուրջ է» մոտեցել այդ եզրերին՝ առանց դեկոնստրուկտիվ գործիքաշարի: Դրանք ընդունվել են որպես **իրականության** ինչ-որ փուլեր, մինչդեռ ոչ միայն դրանց բովանդակության և իրականության համապատասխանությունն է վիճարկելի, այլև դրանք սկզբունքորեն նարատիվ մեկնաբանություններ են և որոշակի արժևորումներ: Ստացվում է, որ «սառը պատերազմի» մասին գիտական բանավեճերը վերաբերում են ոչ թե ինքնին անցյալին, այլ անցյալի նարատիվներին, քանի որ «սառը պատերազմը» ոչ այլ ինչ է, եթե ոչ նարատիվ մեկնաբանություն, որը, ի դեպ, չի կարող ճշմարիտ կամ սխալ լինել: Այսինքն, եթե պատմաբանը որոշում է 1944 թ. մինչև 1990-ական թթ. ընկած ժամանակահատվածում տեղի ունեցած որոշ իրադարձությունների ամբողջությունը որակել որպես «սառը պատերազմ», դա կարող է անցյալի բնույթը հասկանալու համար լինել արդյունավետ կամ ոչ, բայց չի կարող ընկալվել որպես ճշմարիտ կամ սխալ: Ավելին, Ֆ.Անկերամիթը գրում է, թե «պատմական ժամանակը Արևմտյան քաղաքակրթության համեմատաբար վերջին ժամանակների և չափազանց արհեստական հնարանք է»¹⁰: Ժամանակը, որ թվում է, թե պատմության հիմնական բնութագրիչն էր, առհասարակ դուրս է մնում նարատիվիզմի համաշարադրանքից: **Ժամանակը** դուրս է մնում, քանի որ մենք գործ ունենք բացառապես նարատիվների հետ, որոնք գիտակցությանն են պատկանում և ժամանակից անդին են:

Ըստ Ֆ.Անկերամիթի՝ պատմության նարատիվիստական ըմբռնումը լայն հորիզոններ է բացում պատմականության երևութաբանական հասկացման համար: Այսպես, նարատիվիստական պատմության փիլիսոփայության դրույթներից մեկի համաձայն՝ **ինքնա- (self)** հասկացությունը ևս նարատիվ մեկնաբանություն է, որից ածանցվում են մնացած բոլոր պատումները¹¹: Այսօրինակ մոտեցումը հեռանկարային է այն իմաստով, որ պատմակերտման գործընթացում ենթադրում է յուրօրինակ ստեղծագործականության ընդգրկում: Իր «Պատմագրություն և պոստմոդեռնիզմ» հոդվածում Ֆ.Անկերամիթը խոսում է մեկնաբանությունների առատության հետևանքով անցյալի կորստի վտանգի առաջացման մասին՝ նկատելով, որ «ինքնին տեքստն այլևս հեղինակավոր ազդեցություն չունի մեկնաբանության վրա»¹²: Իսկապես, յուրաքանչյուր պատմական (և ոչ միայն) երևույթի մասին առկա են անհատական գիտակցության համար անհասանելի քանակությամբ մեկնաբանություններ, ինչը մի կողմից անհնար է դարձնում տվյալ երևույթի մասին ազատ մտածումը, մյուս կողմից՝ ներակա կերպով «հեծանիվ հնարելու» վտանգը կա: Նման երկընտրանքի հաղթահարման ճանապարհ առաջադրեցին Աննալների դպրոցի ներկայացուցիչները՝ միտված լինելով անցյալում բացահայտելու հետազոտման այլ օբյեկտներ (ինչպես, օրինակ, 17-րդ դարի անգլիացի բանվորների առօրյան և այլն), որն, ըստ Ֆ.Անկերա-

10 Նույն տեղում, էջ 33:

11 Տե՛ս նույն տեղում, էջ 43:

12 Նույն տեղում, էջ 163:

Վեց դրույթ նարատիվիստական պատմության փիլիսոփայության մասին¹⁵

1. Պատմագիտական նարատիվներն անցյալի մեկնաբանություններ են:

1.1. Պատմագրությունը հասկանալու համար **պատմագիտական նարատիվ** և **մեկնաբանություն** եզրերն ավելի լավ բանալի են ապահովում, քան **նկարագրություն** և **բացատրություն** եզրերը:

1.2. Մենք մեկնաբանում ենք ոչ թե երբ քիչ տվյալներ ունենք, այլ երբ չափազանց շատ ունենք (տե՛ս 4.3): Նկարագրությունը և բացատրությունը տվյալների «ձգգրիտ» քանակ են պահանջում:

1.2.1. Գիտական տեսությունները որոշարկված չեն, քանի որ անվերջ թվով տեսություններ կարող են բացատրություն լինել հայտնի տվյալների համար. մեկնաբանությունները որոշարկված չեն, քանի որ միայն անվերջ թվով մեկնաբանությունները կարող են բացատրություն լինել բոլոր հայտնի տվյալների համար:

1.3. Մեկնաբանությունը թարգմանություն չէ: Անցյալը տեքստ չէ, որը պետք է **թարգմանվի** նարատիվ պատմագրության. այն պետք է **մեկնաբանվի**:

1.4. Նարատիվ մեկնաբանություններն անպայման չէ, որ հետևողական բնույթ ունենան. պատմագիտական նարատիվներն ընդամենը պատահականորեն են պատումներ իրենց սկզբով, միջնամասով և ավարտով:

1.4.1. Պատմական ժամանակը Արևմտյան քաղաքակրթության համեմատաբար վերջին ժամանակների և չափազանց արհեստական հնարանքն է: Դա մշակութաբանական, այլ ոչ թե փիլիսոփայական հասկացություն է: Ուստի ժամանակի գաղափարի վրա նարատիվիզմի հիմնումը շարժվող ավազի վրա կառույց է:

1.4.2. Նարատիվիզմը կարող է բացատրել ժամանակը, բայց չի բացատրվում դրանով (տե՛ս 2.1.3 և 4.7.5):

1.5. Քսան տարի առաջ պատմության փիլիսոփայությունը գիտականամետ էր. պետք է խուսափել հակառակ ծայրահեղությունից՝ պատմագրությունը որպես գրականության ձև դիտարկելուց: Պատմականության սկզբունքը (historism) այդ երկուսի *juste milieu*¹⁶-ն է. պատմականությունը պահպանում է այն, ինչը ճիշտ է պատմության նկատմամբ գիտականամետ և գրական մոտեցումներում և խուսափում է երկուսում էլ առկա չափազանցություններից:

1.5.1. Պատմագրությունը **գարգացնում է** սոցիոպատմական իրականության նարատիվ մեկնաբանությունները. գրականությունը **կիրառում է** դրանք:

1.6. Հստակ սահմանագիծ չկա պատմագրության և նարատիվիստական պատմության փիլիսոփայության միջև (տե՛ս 4.7.5. և 4.7.7):

2. Նարատիվիզմն ընդունում է անցյալն այնպես, ինչպես այն կա: Նույնաբանության տեսքով՝ անցյալի մասին ընդունում է այն, ինչը կասկածելի չէ: Այն, ինչ կասկածելի չէ, պատմական փաստ է: Վերջին դատողությունը

¹⁵ Այս դրույթներն ամփոփում են հայացքները, որոնք ես շարադրել եմ իմ “Narrative Logic. A Semantic Analysis of the Historian’s Language” գրքում, 1983 թ.:

¹⁶ Ոսկե միջին, բառացիորեն՝ ճիշտ մեջտեղում (ֆր.) – թարգմ.:

երկու իմաստով էլ ձշմարիտ է (տե՛ս 3.4.1 և 3.4.2):

2.1. Անհրաժեշտ է պատմագիտական հետազոտությունը (փաստերի հարց) զատորոշել պատմագիտական գրից (մեկնաբանության հարց): Այս տարբերակումը նման է, թեպետ ոչ մի կերպ նույնական չէ, գիտության փիլիսոփայության մեջ դիտարկման դատողության և տեսության տարբերակմանը:

2.1.1. Պատմագիտական հետազոտության արդյունքներն արտահայտվում են դատողություններով. նարատիվ մեկնաբանությունները դատողությունների ամբողջություններ են:

2.1.2. Հետաքրքիրը ոչ թե եզակի և ընդհանուր դատողությունների տարբերակումն է, այլ ընդհանուր դատողության և պատմագիտական նարատիվի: Եզակի դատողությունը կարող է ծառայել երկու «տերերին» էլ:

2.1.3. Ժամանակային որոշարկումներն արտահայտվում են դատողություններում, այլ ոչ թե դատողություններով և, հետևաբար, նարատիվիստական պատմության փիլիսոփայության համար հատուկ հետաքրքրություն չեն ներկայացնում: Նարատիվիստական պատմության փիլիսոփայությունը գործ ունի դատողությունների հետ և ոչ թե դրանց մասերի (ինչպիսին ժամանակի ցուցիչներն են):

2.2. Պատմագիտական հետազոտության փիլիսոփայության և պատմագիտական նարատիվի բաղադրիչների (դատողությունների) միջև նմանություն կա: Պատմագիտական գրի փիլիսոփայությունը և պատմագիտական նարատիվն իր ամբողջության մեջ փոխկապակցված են նույն կերպ:

2.2.1. Մի քանի բացառություններով (Ու.Հ. Ուալշ, Հ.Վ. Ուայթ, Լ.Օ. Մինք), ներկայիս պատմության փիլիսոփայությունը հետաքրքրված է բացառապես պատմագիտական հետազոտությամբ:

2.2.2. Հոլիզմի (նարատիվիստական) հանդեպ անվստահությունը ներկայիս փիլիսոփայությանը խանգարում է հասկանալ պատմագիտական նարատիվը:

2.3. Ամենավճռական և ամենահետաքրքիր մտավոր մարտահրավերները, որոնց հանդիպում է պատմաբանը, գտնվում են պատմական գրի մակարդակում (ընտրություն, մեկնաբանություն, ինչպես ըմբռնել անցյալը): Պատմաբանն էականորեն ավելին է, քան մարդասպան Ջոն Դոուլի՝ Քոլլինգվուդի խուզարկուական փնտրտուքը:

2.4. Քանի որ գործողության փիլիսոփայությունը¹⁷ գործ ունի պատմագիտական նարատիվի բաղադրիչների հետ, այն երբեք չի կարող նպաստել պատմագիտական նարատիվի մեր ներըմբռնմանը:

2.4.1. Գործողության փիլիսոփայությունը երբեք չի կարող խոսել մարդկային գործողության չկանխատեսված հետևանքների լեզվով: Որպես պատմության փիլիսոփայություն՝ գործողության փիլիսոփայությունը հարմար է միայն նախապատմական պատմագրության համար: Անկարող լինելով հաղթահարելու մեթոդաբանական անհատապաշտության սահմանափակությունները՝ պատմագրական առումով այն պարզունակ է:

2.4.2. Ֆոն Վրիգտի և Ռիկյորի՝ գործողության փիլիսոփայության այս

17 Գործողության փիլիսոփայությունը ուսմունք է, համաձայն որի մարդկային բոլոր գործողությունները սկզբունքորեն կանխատեսելի են, և զբաղվում է դրանց բացահայտմամբ:

խնդրի լուծման փորձերն անհաջող են: Պատմական նշանակությունը տարբերվում է գործչի մտադրությունից:

2.4.3. Չկանխամտածված հետևանքների լեզուն մեկնաբանության լեզուն է (սովորաբար տարբերություն է լինում պատմաբանի և պատմական գործչի հեռապատկերների (perspective) միջև):

2.4.4. **Տրամաբանական կապի փաստարկը** նարատիվիզմի հատուկ դեպքն է (այն իմաստով, որ այն տրամաբանական սխեմա է ապահովում, որի միջոցով անցյալի մասին գիտելիքը կազմակերպվում է):

3. Նարատիվիզմը իստորիզմի արդի ժառանգն է (չջիոթել Պոպերի historicism-ի հետ). երկուսն էլ ընդունում են, որ պատմաբանի խնդիրը, ըստ էության, մեկնաբանական է (այսինքն՝ բազմազանության մեջ միասնություն գտնելը):

3.1. Մեկնաբանությունները նպատակաուղղված են դեպի միասնությունը, որն իրերի բնորոշ հատկությունն է (տե՛ս 4.4):

3.1.2¹⁸. Պատմապաշտները փորձում էին բացահայտել էությունը կամ, ինչպես իրենք են անվանում, **historische Idee**¹⁹, որը, նրանց ենթադրությամբ, ինքնին առկա է պատմական երևույթներում: Նարատիվիզմը, ընդհակառակը, ընդունում էր, որ պատմական մեկնաբանությունը անցյալի հիման վրա կառուցվածք է նախագծում, բայց չի հայտնագործում. ասես այդ կառուցվածքը անցյալում ինքնին գոյություն ուներ:

3.1.3. Իստորիզմը պատմության կատարյալ տեսություն է, եթե պատմական երևույթների մասին տեսությունից այն թարգմանվի անցյալի մասին մեր խոսելու տեսության (այն, ինչ մետաֆիզիկական է եղել, պետք է դառնա լեզվաբանական):

3.1.4. Քանի որ ֆաբուլայի կամ լարված սյուժեի գաղափարը ստիպում է մտածել ինքնին անցյալում կառուցվածքի կամ պատումի ներկայության մասին, այս գաղափարը ոչնչով չարդարացված զիջում է իստորիստական կամ նարատիվիստական ռեալիզմին:

3.2. Պատմագիտական նարատիվները արտապատկերումներ (projections) (անցյալի վրա) կամ անդրադարձներ չեն անցյալի նկատմամբ՝ դրա հետ կապված թարգմանության կանոններով, որոնք սկիզբ են առնում սոցիալական աշխարհի մեր առօրյա կենսափորձից, սոցիալական գիտություններից կամ մտահայեցողական պատմության փիլիսոփայությունից:

3.2.1. Նարատիվ մեկնաբանությունները դրույթներ են, ոչ թե վարկածներ:

3.3. Նարատիվ մեկնաբանությունները **կիրառվում են** անցյալի նկատմամբ, բայց չեն համապատասխանում կամ **վերաբերում** դրան (ինչպես դատողությունները [դրանց մասերը]):

3.3.1. Ներկայիս պատմագիտական նարատիվի փիլիսոփայության մեծ մասը հմայված է դատողության պատկերով:

3.3.2. Նարատիվ լեզուն ինքնավար է ինքնին անցյալի նկատմամբ: Նարատիվի փիլիսոփայությունն իմաստ է ձեռք բերում այն և միայն այն դեպքում, եթե այս ինքնավարությունն ընդունվում է (տե՛ս 4.5):

¹⁸ Ըստ հերթականության՝ այստեղ պետք է լիներ 3.1.1-ը, բայց որոշեցինք հավատարիմ մնալ բնագրի համարակալմանը – թարգմ.:

¹⁹ Պատմական գաղափար (գերմ.)-թարգմ.:

3.3.3. Քանի որ նարատիվ մեկնաբանությունները միայն կիրառվում են և չեն վերաբերում (հմմտ. պատկերացման հետ, որի դիրքերից նկարիչը նկարում է բնապատկեր), դրանց և անցյալի հարաբերության միջև ամրագրվածություն չկա: Պահանջը, որ պետք է այդպիսի ամրագրվածություն լինի, կատեգորիական սխալի հետևանք է (այսինքն՝ պատմագիտական նարատիվից պահանջվում է այն, ինչը միայն դատողությանն է տրված):

3.3.4. Նարատիվ մեկնաբանությունները «քեզ դուրս են հանում պատմական ռեալությունից» և ոչ թե «հետ են ուղարկում դեպի այն» (ինչպես դատողությունն է անում):

3.4. Նարատիվ լեզվում լեզվի և իրականության փոխհարաբերությունը համակարգված կերպով «ապակայունանում է» (տե՛ս 5.1.2):

3.4.1. Իմացաբանությունը պատշաճ է պատմագիտական հետազոտության փիլիսոփայության համար, բայց կարևոր չէ պատմագիտական գրի փիլիսոփայության կամ նարատիվ մեկնաբանության փիլիսոփայության համար:

3.4.2. Իմացաբանությունը, որն ուսումնասիրում է լեզվի և իրականության փոխհարաբերությունը այնքանով, որքանով այս փոխհարաբերությունն ամրագրված է ու հաստատուն, ուշադրություն չի դարձնում գիտության և պատմագրության բոլոր իրական խնդիրներին, որոնք առաջ են գալիս միայն այն բանից հետո, երբ իմացաբանությունը մնացածները լուծված է համարում: **Ֆունդամենտալիզմը** հետաքրքրված է նրանով, ինչը հիմնարար առումով անհետաքրքիր է²⁰:

3.4.3. «Ինչն է հիմնավորում պատմագիտական նկարագրությունները»-ի փիլիսոփայական ուսումնասիրությունը պատմաբանի մտավոր ձեռքբերումների ոչ բացահայտ մերժում և զրպարտանք է:

4. Նարատիվ լեզուն օբյեկտ լեզու չէ:

4.1. Նարատիվ լեզուն անցյալը **ներկայացնում է** եզրերով, որոնք չեն **վերաբերում** կամ **համապատասխանում** անցյալի մասերին կամ տեսանկյուններին: Նարատիվ մեկնաբանություններն այս առումով նմանվում են այն մանեկեններին, որոնք նորածնության դիզայներներն օգտագործում են՝ ցուցադրելու համար իրենց զգեստների և հագուստների որակները: Լեզուն օգտագործվում է՝ ցույց տալու համար, թե ինչն է պատկանում այն աշխարհին, որն իրենից տարբերվում է:

4.1.1. Նարատիվիզմը ոչ թե անցյալի հնարավոր եղելության կառուցումն է, այլ անցյալի նարատիվ մեկնաբանությունների:

4.1.2. Նարատիվ մեկնաբանությունները **Gestalt**²¹-ներ են:

4.2. Տրամաբանորեն, նարատիվ մեկնաբանությունները ասույթների բնույթի են (անցյալին որոշակի դիտանկյունից նայելու առումով):

4.2.1. Ասույթները կարող են օգտակար, շահավետ լինել կամ չլինել, բայց չեն կարող չլինել ձշմարիտ կամ սխալ. նույնը, հետևաբար, կարելի է ասել պատմագիտական նարատիվների մասին:

4.2.2. Մտահայեցողական համակարգերի և բուն պատմության միջև

20 Բնագրում այստեղ բառախաղ կա. **Foundationalism** is interested in what is fundamentally uninteresting. – թարգմ.:

21 Պատկեր (գերմ.) – թարգմ.:

ներէական ոչ մի տարբերություն չկա. դրանք տարբեր կերպ են կիրառվում: Մտահայեցողական համակարգերը կիրառվում են որպէս **գլխավոր-նարատիվներ**, որոնց մյուս նարատիվները պետք է ենթարկվեն:

4.2.3. Պատմագիտական գիրը մետաֆիզիկայի հետ կիսում է իրականության (մասերի) էության սահմանման «ջանքերը», բայց մետաֆիզիկայից տարբերվում է իր նումինալիզմով (տե՛ս 4.7.1):

4.3. Նարատիվ մեկնաբանությունները գիտելիքներ չեն, այլ գիտելիքի **կազմակերպումներ**: Մեր դարը՝ տեղեկատվության իր չափազանցությամբ, ավելի շուտ կանգնած լինելով գիտելիքի ու տեղեկատվության կազմակերպման խնդրի առջև, քան այն ձեռքբերելու, բոլոր հիմքերն ունի նարատիվիզմի արդյունքներով հետաքրքրվելու համար:

4.3.1. Նարատիվ մեկնաբանությունների առնչությամբ՝ կոգնիտիվիզմը ռեալիստական բոլոր սխալ պատկերացումների աղբյուրն է:

4.4. Տրամաբանորեն, նարատիվ դատողությունները իրերի բնույթի են (ոչ թե հասկացությունների). դրանց մասին, ինչպէս իրերի, կարելի է խոսել առանց այն լեզվի մաս կազմելու, որտեղ դրանք **հիշատակվում են**: Լեզուն այստեղ կիրառվում է նարատիվ մեկնաբանություն կառուցելու նպատակով, որն ինքը լեզվի ասպարեզից դուրս է գտնվում, չնայած մեկնաբանությունը «կազմվում է» լեզվից (նմանապէս, **աթոռ** բառի իմաստը չի կարող հանգեցվել այդ բառի տառերին):

4.4.1. Նարատիվ մեկնաբանությունները հատում են իրերի ոլորտի և լեզվի ոլորտի միջև առկա սովորական սահմանը, ինչպէս դա փոխաբերությունն է անում:

4.5. Տասնյոթերորդ դարի ձգնաժամի մասին պատմագիտական քննարկումը, օրինակ, բանավեճ է ոչ թե իրական անցյալի մասին, այլ անցյալի նարատիվ մեկնաբանությունների:

4.5.1. Անցյալի մասին մեր խոսքերը պատված են հաստ կեղևով, որը կապված է ոչ թե անցյալի հետ ինքնին, այլ պատմագիտական մեկնաբանության և մրցակցող պատմագիտական մեկնաբանությունների մասին վեճերի հետ: Նարատիվ լեզուն թափանցիկ չէ և նման չէ ապակե թղթապանակի, որի միջոցով դեպի ինքնին անցյալ անարգել հայացք ունենանք:

4.6. Ինքնին անցյալի նկատմամբ նարատիվ լեզվի ինքնավարությունն առնվազն չի ենթադրում, որ նարատիվ մեկնաբանությունները պետք է քննահաճ լինեն (տե՛ս 5.3, 5.6):

4.6.1. Անցյալի մասին փաստերը կարող են նարատիվ մեկնաբանություններին կողմ կամ դեմ փաստարկներ լինել, բայց երբեք չեն կարող պայմանավորել այդ մեկնաբանությունները (փաստերը միայն ապացուցում կամ հերքում են անցյալի մասին դատողությունները) (տե՛ս 1.2.1): Միայն մեկնաբանությունները կարող են ապացուցել կամ հերքել մեկնաբանությունները:

4.7. Նարատիվ մեկնաբանությունները կարող են հատուկ անուններ ունենալ (ինչպէս Տասնյոթերորդ դարի ընդհանուր ձգնաժամը, Սառը պատերազմը, Մաներիզմը²² կամ Արդյունաբերական հեղափոխությունը): Մեծ

²² 16-րդ դարի եվրոպական գեղարվեստական ոճ, որին բնորոշ են ներդաշնակության սկզբունքների խեղաթյուրումը և ողբերգականությունը:

մասամբ, սակայն, այդպես չէ:

4.7.1. Նարատիվ տրամաբանությունը խիստ նոմինալիստական է:

4.7.2. Անունները, ինչպիսին **Մաներիզմ** է, վերաբերում են պատմագիտական մեկնաբանություններին և ոչ թե անցյալի իրականությանն ինքնին («Ինչ մաներիզմ նկատի ունեք»: «Փնզների մաներիզմը»):

4.7.3. Սա չի նշանակում, որ այս անունները բանեցվում են ինքնին պատմական իրականության հետ կապ չունեցող ոլորտում (օրինակ՝ **Մաներիզմ** անունը վերաբերում է նարատիվ մեկնաբանության դատողություններին, իսկ այս դատողություններում հղում կա դեպի ինքնին պատմական իրականություն):

4.7.4. Նարատիվ մեկնաբանությունները էքզիստենցիալ ենթատեքստեր չունեն (օրինակ՝ **Արդյունաբերական հեղափոխությունը** պատմական իրականության մեջ հսկայական անդամ ուժ չէ՝ աննշմարելի և անբացահայտ մնացած մինչև 1884 թ., երբ Անտոլո Թոյնբին գրեց **Արդյունաբերական հեղափոխությունը Անգլիայում**-ը, այլ անցյալը հասկանալու համար մեկնաբանական գործիք է):

4.7.5. Այնուամենայնիվ, եթե նարատիվ մեկնաբանությունը երկար ժամանակ չի վիճարկվում, ընդունվում է բոլորի կողմից և առօրյա լեզվի մաս է դառնում (այսպիսով գրկվելով պատմագիտական բնույթից), այն կարող է վերածվել առարկայի (առարկայի դասի) հասկացության: Նարատիվ առարկան (տես 4.4) դառնում է առարկա իրականության մեջ: Ահա այսպես են առաջանում առարկաների (առարկաների դասերի) հասկացությունները: Տիպականացման գործընթացները որոշում են, թե ինչն է դեռևս լոկ մեկնաբանական և ինչը՝ իրական. ոչինչ ամրագրված և բացարձակ չկա այն երևույթների սահմանազատման մասին, ինչը մեկնաբանություն է և ինչը պատկանում է իրականության գույքացուցակին:

4.7.6. Առարկաների (առարկաների դասերի) հասկացությունները (ինչպես **չուն** կամ **ծառ**) տրամաբանորեն ավելի բարդ են, քան նարատիվ մեկնաբանությունները, քանի որ դրանք ենթադրում են տիպականացման գործընթաց, որը բացակայում է վերջինիս դեպքում: Մեկնաբանությունը տրամաբանորեն նախորդում է առարկաների դասերի [հասկացություններին]: Գոյաբանությունը մեկնաբանության համակարգում է:

4.7.7. Փոխաբերությունը և նարատիվ մեկնաբանությունը ձևավորում են մեր լեզվի հիմքը:

4.7.8. Առանց տիպերի տեսության նարատիվիզմը հնարավոր չէ: Առանց դրա մենք անխուսափելիորեն սխալ ուղղությամբ կնայենք: Առարկաները (առարկաների դասերը), հետևաբար, ավելի հիմնարար են, քան նարատիվ մեկնաբանությունները:

4.7.9. Պահանջել հստակ նշանակություն **սառը պատերազմ** և **մաներիզմ** բառերի համար, նույնն է, թե պահանջել, որպեսզի պատմագիտական վեճերը դադարեցվեն: Պատմագիտական գիրը ոչ թե մեկնարկում, այլ ավարտվում է սահմանումներով:

4.7.10. «Սառը պատերազմ»-ի նման հասկացությունները, կազմված լինելով դատողություններից, տրամաբանորեն տարբերվում են տեսական հասկացություններից:

4.8. Պատճառային բացատրությունը, օրինակ, **ընդգրկող օրենքի մոդելի** (ԸՕՄ) համաձայն, գործառնում է բացառապես պատմագիտական հետազոտության մակարդակում (և նաև պատմագիտական նարատիվի բաղադրիչների)։ մենք չպետք է հարցնենք սառը պատերազմի պատճառի մասին, քանի որ ինչին այս եզրը վերաբերում է, պատմագիտական նարատիվ է։ Անիմաստ է հարցնել պատմագիտական մեկնաբանության պատճառի մասին։ Յուրաքանչյուրը, ով հարցնում է սառը պատերազմի պատճառի մասին, իրականում ուզում է տեղեկանալ 1944 թ. և 1990-ական թթ. սկզբների միջև եղած իրադարձությունների վճռական մեկնաբանության և ոչ թե իրադարձությունների երկու առանձին համախմբերի միջև պատճառական կապերի մասին։

5. Պատմագիտական նարատիվի դատողությունները միշտ **երկակի** գործառույթ ունեն։ 1) նկարագրել անցյալը և 2) սահմանել և անհատականացնել անցյալի որոշակի նարատիվ մեկնաբանություն։

5.1. Տրամաբանորեն և պատմագիտական նարատիվները, և՛ փոխաբերությունը բաղկացած են ընդամենը երկու գործողությունից։ 1) նկարագրություն և 2) (փոխաբերական) դիրքորոշման անհատականացում։ Պատմագիտական նարատիվը տևական փոխաբերություն է։

5.1.1. Փոխաբերությունը ինչ-որ այլ եզրերով ցույց է տալիս, թե փոխաբերական արտահայտությունն ինչի մասին է (օրինակ՝ «Ձոնը խոզ է»)։ նմանապես, պատմագիտական նարատիվը անցյալը ցույց է տալիս մի բանի եզրերով, որը անցյալ չէ (օրինակ՝ նարատիվ մեկնաբանության) (տե՛ս 4.1)։

5.1.2. Շնորհիվ պատմական իրականության նկատմամբ իր ինքնավարության (պատմագիտական նարատիվում լեզվի և իրականության հարաբերությունը մշտապես ապակայունանում է)՝ պատմագիտական նարատիվը, փոխաբերության նման, նոր նշանակության ծննդավայր է։ Ընդունված, ձգգրիտ նշանակությունը պահանջում է կայուն հարաբերություն լեզվի և իրականության միջև։

5.2. Պատմագիտական նարատիվի եզակի դատողության (ձգգրիտ) նշանակության՝ եթե առանձին վերցվի, և պատմագիտական նարատիվի (փոխաբերական) նշանակության՝ եթե ամբողջությամբ վերցվի, միջև տարածայնությունը պատմագիտական նարատիվի **գործունեության շրջանակն** է։ Սա ցույց է տալիս ժամանակագրության (առանձին դատողության համապատասխան) և պատմագիտական նարատիվի (նարատիվի դատողությունների ամբողջության համապատասխան) միջև եղած տարբերությունները։ Կամայականորեն իրար խառնված դատողությունների համախումբը գործունեության շրջանակ չունի։

5.2.1. Պատմագիտական նարատիվը պատմական նարատիվ է այնքանով, որքանով դրա (փոխաբերական) նշանակությունն իր ամբողջության մեջ գերազանցում է առանձին դատողությունների (ձգգրիտ) նշանակությունների գումարը։ Պատմագիտական նարատիվ լինելը, հետևաբար, աստիճանի հարց է։

5.2.2. Պատմագիտական նարատիվը նման է բելվեդերի²³։ առանձին

23 Իտալերեն belvedere (հիանալի տեսք) բառից։ Բելվեդերը բարձր տեղանքում կառուցված շինություն է, որտեղից շրջակայքը դիտելու հնարավորություն է բացվում։ - Թաթևյան։

դատողությունների սանդղաղբով բարձրանալուց հետո ծանոթանում ես տարածքի հետ, որն անհամեմատ շատ գերազանցում է այն տարածքը, որտեղ սանդղաղբը կառուցվել էր:

5.2.3. Պատմաբանի (փոխաբերական)՝ նարատիվ դաշտ զարգացնելու ընդունակությունն իր մտավոր գինանոցում ամենամեծ արժանիքն է:

5.3. Ամենալավ պատմագիտական նարատիվը ամենափոխաբերական պատմագիտական նարատիվն է, պատմագիտական նարատիվը՝ գործունեության ամենալայն շրջանակով: Դա նաև «ամենավտանգավոր» և «ամենահամարձակ» պատմագիտական նարատիվն է: Հակառակը, ոչ նարատիվիստը պետք է նախընտրի անբովանդակ պատմագիտական նարատիվ առանց ներքին կազմակերպվածության:

5.3.1. Պատմագիտական նարատիվի նարատիվ հորիզոնը չի կարող հիմնվել՝ նկատի ունենալով միայն **այդ** պատմագիտական նարատիվը: Նարատիվի գործունեության շրջանակը երևան է գալիս միայն, երբ նարատիվ մեկնաբանությունները համեմատում ենք մրցակցող մեկնաբանությունների հետ: Եթե մենք ունենք ինչ-որ պատմական թեմայի ընդամենը **մեկ** նարատիվ մեկնաբանություն, ուրեմն մենք չունենք **ոչ մի** մեկնաբանություն:

5.3.2. Պատմագիտական ներըմբռնումը, հետևաբար, ծնվում է մրցակցող նարատիվ մեկնաբանությունների **միջև** տարածության մեջ և չի կարող նույնացվել որևէ հատուկ մեկնաբանությունների (ամբողջության) հետ:

5.3.3. **Կոզնիտիվ գիտելիքը** պետք է նույնացվի լեզվաբանական միջոցների հետ, որոնք օգտագործվում են դա արտահայտելու համար (եզակի դատողություններ, ընդհանուր դատողություններ, տեսություններ և այլն). պատմագիտական ներըմբռնումն ընկած է նարատիվ մեկնաբանությունների միջև դատարկ տարածության մեջ (դա, այսպես ասած, տարածացուցական է):

5.3.4. Պատմագիտական ներըմբռնումը կազմվում է պատմագրական բանավեճերում ու դրանց շնորհիվ և ոչ թե պատմագիտական բանավեճի առանձին փուլերով, այսինքն՝ ոչ մնացածից մեկուսացած առանձին նարատիվ մեկնաբանություններով:

5.3.5. Պատմագրական վեճը, վերջին հաշվով, նպատակաուղղված է ոչ թե դեպի համաձայնությունը, այլ մեկնաբանական դրույթների շատացումը: Պատմագրության նպատակը նարատիվ առարկաների փոխակերպումը **չէ** իրական առարկաների (կամ դրանց տեսակի հասկացությունների) (տես 4.7.5): Հակառակը, այն փորձում է կազմալուծել ամենը, ինչ թվում է հայտնի և ոչ խնդրահարույց: Դրա նպատակը չիմացվածի հանգեցումը **չէ** իմացվածի, այլ օտարումն է այն ամենի, ինչն այնքան սովորական է թվում:

5.3.6. Տարակարծության և պատմագրական բանավեճի այս շեշտադրումը պահանջում է հրաժարվել դեկարտյան կամ կանտյան, փոխարինող, տրանսցենդենտալ ճանաչող սուբյեկտի հասկացությունից: Արիստոտելյան դիրքորոշումը պետք է գերադասվի: Ըստ Արիստոտելի՝ փորձը և գիտելիքը փոխազդեցություններ են մեր և աշխարհի միջև և ոչ թե վերջինի վերացարկումը՝ պայմանավորված տրանսցենդենտալիստական, ձևական սխեմայով: Նմանապես, պատմագիտական մեկնաբանությունը ծագում է մեկ-

նաբանությունների փոխազդեցությունից և չպետք է այն վերագրվի կոնկրետ առանձին կամ էլ անդրպատմական, տրանսցենդենտալ սուբյեկտի:

5.4. Նարատիվ գործունեության շրջանակը տրամաբանորեն անկախ է արժեքների աշխարհից. հետևաբար, պատմագիտական նարատիվը կարիք չունի արժեքապես չեզոք լինելու, որպեսզի լայն հորիզոն ունենա, այսինքն՝ որպեսզի օբյեկտիվ լինի (օրինակ՝ Կ. Պոպերի, Յ.Լ. Թալմոնի, Հ. Արենդտի և այլոց առաջարկած տոտալիտար պետության գաղափարը արժեքապես չեզոք չէր, բայց լայն հորիզոն ուներ):

5.4.1. Պատմաբանը պրոֆեսիոնալ «աութսայդեր» է. իր և պատմական իրականության միջև բացը, որը նա միշտ փորձում է կամրջել, նման է անհատի և հասարակության միջև եղած բացին, որը բարոյագիտությունն ու քաղաքական փիլիսոփայությունն են փորձում կամրջել: Բարոյագիտական չափումը, հետևաբար, պետք է համատարած լինի պատմագրության մեջ: Ժամանակակից պատմագրությունը հիմնվում է քաղաքական որոշման վրա:

5.4.2. Փոխաբերությունը և նարատիվը *trait d'union*²⁴ են է-ի և **պետք է**-ի միջև. պատմական մեկնաբանության հաստատական դատողությունների է-ն կարող է առաջարկել, թե ինչ **պետք է** արվի:

5.5. Լայբնիցի՝ պրեդիկատը սուբյեկտում²⁵ սկզբունքը պատմագիտական մեկնաբանության տրամաբանության վճռական թեորեմ է: Պատմագիտական նարատիվի մասին բոլոր դատողությունները **անալիտիկորեն** կամ ձշմարիտ են, կամ սխալ:

5.5.1. Այն նորաձև հայացքը, որ քվանտորայնացման փոփոխականները կգրավեն դատողության սուբյեկտի տեղը (Ռասել, Քուայն), սխալ է նարատիվ դատողությունների համար (այսինքն՝ պատմագիտական նարատիվների մասին դատողությունների): Նարատիվ դատողություններում սուբյեկտն անարտասանելի է, հենց այն պատճառով, որ այն պարզապես «հավաքում է» պատմագիտական նարատիվում պարունակվող դատողությունները:

5.5.2. Նարատիվ մեկնաբանությունները բացատրողական ուժ ունեն, քանի որ պատմական իրավիճակի նկարագրությունը կարելի է անալիտիկորեն բխեցնել դրանցից:

5.6. Պատմագիտական սկեպտիցիզմի համար տեղ չկա: Մենք կարող ենք ռացիոնալություն տեսնել այն բանում, թե ինչու են պատմաբանները պատմագիտական վեճի որոշակի փուլում անցյալի մասին մի պատկերացումը գերադասել մյուսից: Սկեպտիցիզմն առաջ է գալիս միայն եթե չեն բավարարվում պատմագիտական վեճի ռացիոնալությամբ, և բացարձակ **հիմքեր** են պահանջվում: Բայց գործնականում այս պահանջը երբեք չի կարող ավելին լինել, քան կոչ պատմաբաններին՝ իրենց աշխատանքն անելու խնամքով և բարեխղճորեն:

6. Իստորիզմի արմատներն ավելի խորն են գնում, քան ընդունվում է

24 Միացման գծիկ (ֆր.) – թարգմ.:

25 Լայբնիցի այդ սկզբունքի համաձայն՝ ձշմարիտ հաստատական դատողության սուբյեկտը պարունակվում է պրեդիկատում. եթե դա բացահայտ է, ուրեմն դատողությունն անալիտիկ է, եթե ոչ բացահայտ՝ դատողությունը սինթետիկ է: – Թարգմ.:

արդի պատմագրության կամ ներկայիս (պատմության) փիլիսոփայության կողմից:

6.1. «Ինքնա»(self) հասկացությունը պատմագիտական, նարատիվ մեկնաբանություն է. նարատիվ մեկնաբանություն, որը ենթադրվում է մնացած **բոլոր** պատմագիտական մեկնաբանություններում: Սա անգլոսաքսոնական հերմենևտիկայի ճշմարտության ռացիոնալ հատիկն է:

6.1.1. Ուստի փաստը, որ նարատիվ մեկնաբանություններն արդեն դեր են խաղում մարդկային անհատի կյանքի մակարդակում, երբեք չի կարող փաստարկ լինել նարատիվիստական ռեալիզմի որոշակի տարբերակի օգտին (այսինքն՝ այն պատկերացման, որ պատմագիտական ճանաչողությունը պետք է ընդօրինակի առօրյա իրականության մեր կենսափորձին): Հակառակն է՝ մեկնաբանական նարատիվիզմն արդեն ներխուժել է մեր առօրյա իրականություն:

6.1.2. Առանձին առարկաների (դրանց դասի) հասկացությունները տրամաբանորեն կախված են նարատիվ մեկնաբանություններից (ինքնություն): Այսպիսով, ինքնությունը նախորդում է անհատականությանը և ոչ թե հակառակը, ինչպես պոզիտիվիզմն է ենթադրում (տես 4.7.5):

Թարգմանությունը անգլերենից՝
Դավիթ Ռ. Մոսինյանի

Frank R. Ankersmit (Groningen)

SIX THESIS ON NARRATIVIST PHILOSOPHY OF HISTORY

Translation and Introduction by David R. Mosinyan

Франк Р. Анкерсмит (Гронинген)

ШЕСТЬ ТЕЗИСОВ НАРРАТИВНОЙ ФИЛОСОФИИ ИСТОРИИ

Перевод и введение Давида Р. Мосиняна